«Երևանի հ. 185 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ

Հաստատված է Երևանի
հ.185 հիմնական դպրոցի
Մանկխորհրդի կողմից

Դպրոցի տնօրեն Է.Պողոսյան

Երևանի
թիվ 185 հիմնական դպրոցի
տնօրենի տարեկան
աշխատանքային պլան
2023-2024 ուսումնական տարի

Բովանդակություն

1. *Նախաբան……3*

2. *Դպրոցի համապարփակ ընդհանուր բնութագիրը ……..……5*

3. *Դպրոցի հիմնախնդիրները 2022-2023 ուսումնական տարում……7*

4. *Ուսումնական գործընթացի նպատակներն ու հիմնախնդիրները……. ..……..…7*

5. *Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան……..9*

1. Նախաբան

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի կազմման հիմքում ՀՀ «Հանրակրթության մասին օրենքում» ամրագրված փոփոխություններն են,ՊՈԱԿ–ի օրինակելի կանոնադրության սահմանումները,տնօրենի կողմից կազմված դպրոցի զարգացման հնգամյա ծրագիրի կատարողականի և ներքին գնահատման արդյունքները: Աշխատանքներին մասնակցել են դպրոցի բոլոր օղակները՝ ներկայացնելով առաջարկներ,կատարելով 2022–2023 ուստարվա աշխատանքների վերլուծություն: Առաջնորդվելով «Հանրակրթության մասին օրենքով» դպրոցը որդեգրել է ամրագրված նպատակները.
http://www.irtek.am/views/act.aspx?aid=150065

Հոդված 5. Հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները

1. **Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝**
   1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը.
   2) մարդկային արժանապատվության պահպանմանը.
   3) իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը.
   4) ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.
   5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.
   6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.
   7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկայի արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը,

հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.
2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.
3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.
4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.
5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.
6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.
7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.
8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածություն:

3. 2023-2024 ուստարում ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու, ուսման որակը բարձրացնելու նպատակով կարևորում ենք հետևյալ կետերը:

1.Սահմանել հսկողություն էլեկտրոնային մատենավարությանը:
2.Հանձնարել ուսուցիչներին լրացուցիչ աշխատանք տանել թույլ և չառաջադիմող սովորողների հետ:2-րդ,5-րդ և 7-րդ դասարաններում կատարել հայտորոշում,ձևավորող գնահատում՝ անհրաժեշտության դեպքում դիմել տնօրենին երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար:
3.Հսկել մ/մ աշխատանքները և մասնակցել նիստերին:
4.Կատարել դասալսումներ և քննարկումներ:
5.Դպրոցի դաստիարակչական աշխատանքներում շարունակաբար համագործակցել ծնողական խորհրդի հետ:
6.Ուշադրության կենտրոնում պահել աշակերտական ինքնավարության մարմինների աշխատանքները: /ԱԽ/
7.Ներքին վերահսկողության միջոցով կատարել սովորողների կարողունակությունների զարգացման դինամիկայի գնահատում:
8.Նպաստել մանկավարժական համակազմի ուսուցման ձևավորման հմտությունների զարգացմանը,մանկավարժական գիտական հետազոտական աշխատանքների իրականացմանը:
9.Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը, կազմակերպել դասղեկի ժամեր նվիրված ՀՀ խորհրդանիշներին և Հայոց բանակին, հայկական մշակույթին,իրականացնել ճանաչողական դաս–էքսկուրսիաներ,միջոցառումներ:

10.Մանկավարժական կոլեկտիվի աշխատանքները իրականացնել պետական չափորոշիչներով առաջադրված խնդիրներին, նոր չափորոշիչային պահանջների ներդրմանը համապատասխան և նպաստել սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

11.Խրախուսել առարկայական օլիմպիադաներում հաղթող սովորողներին,գիտաժողովներում զեկույցով հանդես եկող մանկավարժներին և աշակերտներին:

12.Դպրոցի կառավարմանը մասնակից դարձնել ծնողական և աշակերտական խորհուրդներին, այն դիտել, որպես քաղաքացիական հասարակության կառուցման հիմնաքար:

2. Դպրոցի համապարփակ ընդհանուր բնութագիրը

Դպրոցի համարը՝
«Երևանի հ.185 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Դպրոցի հասցեն՝
Հ.Բեկնազարյան փողոց, 5 շենք
Դպրոցի հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն՝
010358007 dpr185@mail.ru

Դպրոցն աշխատում է հնգօրյա աշխատանքային ռեժիմով, մեկ դասի տևողությունը 45 րոպե է: Դասերի սկիզբը՝ ժամը 9:00

Ուսումնական տարվա սկիզբը 2023 թ. սեպտեմբերի 1-ն է , ավարտը՝ 2024թ. մայիսի24-ը ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ 3-9-րդ դասարանների համար:

Առաջին և երկրորդ դասարաններում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը :

Հաստատությունում 3-րդ -9-րդ դասարաններում գործում է սովորողների գնահատման 10 միավորային համակարգ:

Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները :

Ուսումնական տարին բաժանվում է 2 կիսամյակների, որոնց ընթացքում տրվում են արձակուրդներ՝

- Ուսումնական տարում 3-9-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ **աշնանային**՝ 2023 թվականի հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ, **ձմեռային**՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 7-ը ներառյալ, **գարնանային**՝ 2024 թվականի մարտի 25-ից 31-ը ներառյալ:
- **Երկրորդ դասարանցիների** աշնանային արձակուրդները տրվում են 2023 թվականի հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 21-ը ներառյալ և գարնանայինը՝ 2024 թվականի մարտի 25-ից 31-ը ներառյալ:
- **Առաջին դասարանցիների** աշնանային արձակուրդները տրվում են 2023 թվականի հոկտեմբերի 16-ից 29-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 21-ը ներառյալ, գարնանայինը՝ 2024 թվականի մարտի 18-ից 31-ը ներառյալ:

Տարրական դպրոցն ունի 8 դասարան՝ 221 աշակերտ:

I - 2 դասարան՝54 աշակերտ
II – 2 դասարան՝ 56 աշակերտ
III – 2 դասարան՝62 աշակերտ
IV – 2 դասարան՝49 աշակերտ
Միջին դպրոցն ունի 10 դասարան՝232 աշակերտ:
V-2 դասարան՝51 աշակերտ
VI - 2 դասարան ՝44 աշակերտ
VII – 2 դասարան՝47 աշակերտ
VIII – 1 դասարան ՝50 աշակերտ
IX – 2 դասարան՝40 աշակերտ
Սովորողների ընդհանուր թիվն է՝ 453(01.09.23թ):

Դպրոցի տնօրեն՝ Էլմիրա Պողոսյան

ՈՒԱԳՏ՝ Ռուզաննա Մարտիրոսյան

ՄԿԱԳՏ՝ Աշխեն Բուռնազյան

ԴԱԿ ՝Շուշանիկ Հովսեփյան

Զինղեկ՝ Կարեն Վարոսյան

Հաշվապահ՝ Էմմա Գևորգյան

Գրադարանավար՝ Ալվարդ Սահակյան

Դպրոցի բոլոր մանկավարժները ՄԽ–ի անդամ են:

Դպրոցն ունի ԾԽ և ԱԽ

Ձևավորվել են /չորս/ առարկայական մասնախմբեր՝ Մ/Մ

1. Հումանիտար /Հայոց լեզու և գրականություն, Օտար լեզուներ՝ անգլերեն, ռուսերեն Պատմություն, Հասարակագիտություն , ՀԵՊ/
2. Բնագիտական /Մաթեմատիկա,ինֆորմատիկա, ֆիզիկա ,Աշխարհագրություն,Քիմիա, Կենսաբանություն/
3. Տարրական դասարաններ
4. Բազմամասնագիտական / ՆԶՊ,ֆիզկուլտուրա,ազգային երգ և պար,երաժշտություն,կերպարվեստ,տեխնոլոգիա /

Դպրոցը գործում է իրավաբանական անձի պետական գրանցման ՀՀ պետռեգիստրի

03Ա 056886–ի վկայականի համաձայն: Սովորողների առավելագույն լիցենզավորված թույլատրելի թիվը՝1000 սովորող: 2023–2024 ուստարում ձևավորվել են թվով 18 /տասնութ/ դասարաններ՝ սովորողների 26 /քսանվեց/ թվաքանակի միջին խտությամբ:

3. 2023–2024 ուստարում դպրոցի հիմնախնդիրներն են.

1. Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում:
2.Ուսումնական ծրագրերի կատարում:
3.Ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմում:
4.Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում:
5.Մեթոդական աշխատանքների կանոնակարգում:
6.Առարկայական մեթոդ միավորումների աշխատանքների ղեկավարում:
7.Դասավանդման որակի վերահսկում:
8.Սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացման և կարողունակությունների ձևավորման վերահսկում:
9.Ուսուցչի լավագույն աշխատանքի,դրական փորձի տարածում
10.Ուսուցիչներին իրազեկում մանկավարժական ոլորտում տեղ գտած նորությունների և փոփոխությունների մասին:
11.2-րդ,5-րդ և 7-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրման վերահսկողություն:

4. Ուսումնական գործընթացի նպատակներն ու հիմնախնդիրները

1. Ապահովել սովորողների կրթության որակը.

- Ձևավորել մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության ու մարդասիրության ոգով դաստիարակված անձ:
- Զարգացնել ապագա շրջանավարտի նկարագրին վերաբերող ռազմավարական դրույթները:

2. **Ուստարվա հիմնախնդիրները՝**

- ✓ Ամրապնդել ծնող-դպրոց համագործակցությունը՝ ապահովելով ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկատվությունը, նրանց մասնակցությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներին և դպրոցի կառավարման գործընթացին:

3. Ուստարվա հիմնական դաստիարակչական խնդիրներ՝

- ❖ Կազմակերպել բազմաբովանդակ միջոցառումներ՝ Սովորողների մեջ համընդհանուր դաստիարակության / գեղագիտական, բարոյական, հայրենասիրական, քաղաքացիական, ֆիզիկական, ռազմահայրենասիրական, բնապահպանական, իրավական / զարգացման ուղղությամբ:
- ❖ Սովորողների մեջ ձևավորել դրական վերաբերմունք ուսման, կառուցողական հաղորդակցման, կենդանի բնության,սեփական առողջության և այլ մարդկանց առողջության նկատմամբ.
- ❖ Սովորողների մեջ ձևավորել խոսքի միջոցով համագործակցային փոխհարաբերություններ կառուցելու, իր և ուրիշների համար թիմով աշխատելու նպաստավոր մթնոլորտ ստեղծելու կարողություն.
- ❖ Սովորողների մեջ դաստիարակել ռազմական գիտելիքների կայուն պաշար կրող, մարտունակ և կարգապահ զինվոր:
- ❖ Շարունակել վերահսկողական աշխատանքները սովորողների հաճախելիությունը բարելավելու նպատակով:

❖Հանձնարարել մեթոդմիավորումներին՝ մշակել սույն ծրագրից բխող աշխատանքային ծրագիր, հետևողական աշխատանք տանել այն ուստարվա ընթացքում իրագործելու համար:

5.Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան (օգոստոս - հուլիս)

Աղբյուրը՝

- Օրինակելի կանոնադրություն «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի
- Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը
- Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգ
- Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգ
- Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունում բազմահամակազմ դասարանի կազմավորման կարգ
- «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրություն
- «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրություն

Առաջին կիսամյակ

Օգոստոս - սեպտեմբեր

	Ամիսը, ամսաթիվը	**Քայլը**	**Այլ տեղեկություններ**
1	Օգոստոսի 19-25-ը	Հանրակրթական ուսումնական հաստատության մեթոդմիավորման կողմից նախնական դասաբաշխման կատարում	Հանրակրթական ուսումնական հաստատության հաջորդ ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների առկայության դեպքում մեթոդմիավորումը նախնական դասաբաշխման հարցը կարող է քննարկել հունիսի երկրորդ կեսին մանկավարժական աշխատողների արձակուրդ գնալուց առաջ:
2	Օգոստոսի 20-27-ը	Դասագրքերի բաշխում	Դասագրքերը բաշխվում են տնօրենի հրամանով՝ ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգի պահանջներին

			համապատասխան
3	Օգոստոսի 20-28-ը	Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի կողմից մեթոդմիավորումների ներկայացրած նախնական դասաբաշխման առաջարկի քննարկում և որոշման կայացում	Մանկավարժական խորհուրդն այս դեպքում որոշում է ընդունում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը որոշակի առարկայախմբերի հատկացնելու վերաբերյալ:
4	Օգոստոսի 25-26-ը	Տվյալ առարկայախմբին տրված ժամաքանակի՝ որոշակի առարկաներին հատկացնելու հարցի քննարկում մեթոդմիավորման կողմից և համապատասխան առաջարկությամբ այն մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացում: Մանկավարժական խորհրդի համապատասխան որոշման կայացում, ինչը հաստատվում է տնօրենի հրամանով	Մանկավարժական խորհրդի որոշման և տնօրենի համապատասխան հրամանով ձևակերպվում է հանրակրթական ուսումնական հաստատության առաջիկա ուսումնական տարվա ուսումնական պլանը:
5	Օգոստոսի 28-29-ը	Հանրակրթական ուսումնական հաստատության առաջիկա ուսումնական տարվա ուսումնական պլանի հաստատում	Հաստատության ուսումնական պլանը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատվում է տնօրենի հրամանով:
6	Օգոստոսի 25-28-ը	Նախորդ ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունքների ամփոփում՝ հիմք ընդունելով Ուսումնադասատիարակչակա ն աշխատանքի տարեկան պլանը (ՈՒԴԱՊ)	Ուսումնադաստիարակչակա ն աշխատանքի արդյունքներն ամփոփվում են մանկավարժական խորհրդի նիստում
7	Օգոստոսի 28	Առաջիկա ուսումնական տարում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման և վերահսկման ուղղությամբ լիազորությունների բաշխում	Բաշխումը կատարվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, Հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության, Մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրերի և այլ նորմատիվ իրավական

			ակտերի դրույթներին ու Հաստատության զարգացման ծրագրի պահանջներին համապատասխան:
8	Օգոստոսի 30	Մանկավարժական խորհրդի կազմի հաստատում, մանկխորհրդի քարտուղարի ընտրություն	Մանկավարժական խորհրդի կազմը հաստատվում է տնօրենի հրամանով մեկ ուսումնական տարվա ժամկետով: Հաստատվում է նաև մանկխորհրդի նիստերի ժամանակացույցը:
9	Օգոստոսի 30	Մեթոդմիավորման նախագահների և դասղեկների կազմի հաստատում	Տնօրենը հրամանով հաստատում և մանկավարժական խորհրդի նիստում ներկայացնում է մեթոդմիավորման նախագահների և դասղեկների անվանական կազմը:
10	Օգոստոսի 30-31-ը	Առաջին կիսամյակի դասացուցակի նախնական տարբերակի կազմում	Առաջիկա ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասացուցակի նախնական տարբերակը կազմվում և ուսուցիչներին է ներկայացվում մինչև ուսումնական պարապմունքների սկիզբը
11	Օգոստոսի 30-31-ը	Հանրակրթական դպրոցի դասարանների կազմավորում	Հանրակրթական դպրոցի դասարանները կազմավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա, տնօրենի հրամանով՝ պահպանելով ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգի և ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունում

			բազմահամակազմ դասարանի կազմավորման կարգի պահանջները:
13	Օգոստոսի 31	Ուսումնադաստիարակչական աշխատանքերի տարեկան պլանի (ՈՒԴԱՊ) հաստատում	ՈՒԴԱՊ-ը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է տնօրենը:
14	Սեպտեմբերի 1-4-ը	Առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում	Դասացուցակը հաստատվում է տնօրենի հրամանով:
16	Սեպտեմբերի 1-7-ը	Առանձին ուսումնական առարկաների Թեմատիկ պլանի կազմում և հաստատում տնօրենի կողմից	Թեմատիկ (օրացուցային) պլանը կազմվում է առարկան դասավանդող ուսուցչի կողմից և մեթոդմիավորման հավանությամբ ներկայացվում տնօրենի հաստատմանը:
17	Սեպտեմբերի 4-8-ը	Դասարանների և հաստատության ծնողական խորհուրդների ձևավորում: Հաստատության ծնողական ժողովի անցկացում	Անցկացվում են դասարանական ծնողական ժողովներ, որոնց կողմից ընտրված ծնողական խորհուրդների կազմից ձևավորվում է հաստատության ծնողական խորհուրդը: Անցկացվում է հաստատության (անհնարինության դեպքում՝ առանձին-առանձին՝ 1-4-րդ, 5-8-րդ դասարանների) ծնողական ժողով՝ տնօրենի մասնակցությամբ:
18	Սեպտեմբերի 11-15-ը	Սովորողների առաջին ընդհանուր ժողովի հրավիրում. Աշակերտական խորհրդի ձևավորման նախապատրաստում	Սովորողների առաջին ընդհանուր ժողովը հրավիրվում է տնօրենի կողմից: Աշակերտական խորհուրդը ձևավորվում է հաստատության 6-9-րդ (հիմնական դպրոցի համար) դասարանների դասարանական ժողովներում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրված մինչև երկու ներկայացուցիչներից, դասարանական ժողովներից հետո՝ 10-օրյա ժամկետում,

			սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-ը:
19	Սեպտեմբերի 1-15-ը	Տարիֆիկացիոն ու հաստիքային ցուցակների և ամենամյա ծախսերի նախահաշվի կազմում և ներկայացում հաստատման	Այդ փաստաթղթերը կազմում է տնօրենը և հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնում լիազոր մարմնի հաստատմանը:
20	Սեպտեմբերի 1-15-ը	Հանրակրթական ուսումնական հաստատության բյուջեի նախագծի և բյուջետային օրացույցի կազմում	Հաստատության բյուջեի նախագիծը կազմում է տնօրենը և ներկայացնում խորհրդի քննարկմանը: Բյուջետային օրացույցը կազմվում է ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությամբ ամրագրված ժամանակացույցին համապատասխան:
21	Սեպտեմբերի 6-11-ը	Առաջին կիսամյակի դասացուցակի և դասաբաշխման, առարկայական թեմատիկ պլանների, սովորողների անձնական գործերի լրացում **emis.am** էլեկտրոնային համակարգում	Առաջին կիսամյակի դասացուցակի, առարկայական թեմատիկ պլանների հաստատումից և սովորողների համակազմի ձևավորումից հետո դասացուցակը, թեմատիկ պլանները, սովորողների անձնական գործերում ընդգրկված տվյալները լրացվում են emis.am էլեկտրոնային համակարգում: Կատարվում է նաև ուսուցիչների վերաբերյալ տվյալների փոփոխություն՝ առկայության դեպքում:
22	Սեպտեմբերի 6-11-ը	Նախագծային աշխատանքների ներկայացում և քննարկում /7-րդ դասարաններում/ մմ նիստերում, ներկայացում տնօրենի հաստատմանը	Նախագծային աշխատանքների հաստատում: ՈւԱ-ի գծով տեղակալի կողմից կազմած նախագծային ուսուցման դասացուցակի հաստատում:
23	Սեպտեմբերի 18-20	Ընթերցանության գնահատում 2-րդ դասարաններում	Տարրական դպրոցում ուսումնական գործընթացի

			բարելավմանն ուղղված՝թույլ կողները բացահայտելու և հետագայում շտկելու նպատակ հետապնդող աշխատանք:
24	Սեպտեմբերի 18-22	Մնացորդային գիտելիքների ստուգում հանրահաշվից 9-րդ դասարաններում:	Ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված՝թույլ կողները բացահայտելու և հետագայում շտկելու նպատակ հետապնդող աշխատանք:
25	Սեպտեմբերի 27-29	Առարկայական մեթոդմիավորումների նիստեր	Հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական մեթոդմիավորումները քննարկում են ուսումնական նախագծերի թեմատիկայի ընտրության, դրանց իրականացման հետ կապված,2-րդ,5-րդ և 7-րդ դասարաններում սովորողների անթացիկ առաջադիմության՝անհրաժեշտության դեպքում երկարօրյա խմբակների ձևավորման, ինչպես նաև ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանն ուղղված այլ հարցեր:
	Սեպտեմբերի 29(ամսվա վերջին ուրբաթ օր)	Բաց դռների օր	Ուսուցիչները և ծնողները հանդիպում են ընթացիկ խնդիրների և ուսման որակի բարելավման նպատակով:

Հոկտեմբեր

	Ամիսը, Ամսաթիվը	**Քայլը**	**Այլ տեղեկություններ**
1/26	**Հոկտեմբերի 2-10-ը**	Հանրակրթական ուսումնական հաստատության բյուջեի նախագծի քննարկումների կազմակերպում և բյուջեի նախագծի լրամշակում	Բյուջեի նախագծի մշակման աշխատանքների նախապատրաստական փուլում տնօրենը բյուջետային գործընթացին անհրաժեշտ

			ուղղվածություն տալու, բյուջեի մշակման աշխատանքների վերջնական արդյունքների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացնում է՝ 1) բյուջեի նախագծի հանրային քննարկման կազմակերպումը՝ նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու համար. 2) բյուջեի նախագծի քննարկումը մանկավարժական խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների, կառավարման խորհրդի հետ՝ առաջարկներ ստանալու և պարզաբանումներ տալու նպատակով. 3) ստացած դիտողությունների և առաջարկությունների հիման վրա բյուջեի նախագծի վերջնական տարբերակի մշակումը: Տես՝ Օրինակելի կանոնադրություն «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի, կետ 51-53:
2/ 27	**Հոկտեմբերի 26-27-ը**	Առարկայական մեթոդմիավորումների նիստեր	Հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական մեթոդմիավորումները քննարկում են ուսումնական նախագծերի թեմատիկայի ընտրության, դրանց իրականացման հետ կապված և ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանն ուղղված այլ հարցեր:
3/ 28	**Հոկտեմբերի 11-12-ը**	Անդրադարձ՝ ● ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրությանը՝ - մայրենի, հայոց լեզու, գրականություն,	Հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների

		- մաթեմատիկա, հանրահաշիվ, երկրաչափություն ● առարկայական օլիմպիադաներին նախապատրաստությանը ● էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումների ստուգում	մասնակցությամբ խորհրդակցությունը («Փոքր մանկավարժական խորհուրդ») քննարկում է ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրության արդյունքները, հաջողություններն ու դժվարությունները, տալիս համապատասխան հանձնարարականներ ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման, սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների բարձրացման ուղղությամբ: Անդրադարձ է արվում առարկայական օլիմպիադաներին նախապատրաստությանը, դպրոցական փուլի անցկացման և տարածքային փուլին սովորողներին նախապատրաստելու հարցերին: Խորհրդակցությունը քննարկում է նաև էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումների հարցը, նշում թերությունները, կատարում հանձնարարություններ դրանք որոշակի ժամկետում շտկելու ուղղությամբ:
4/ 29	**Հոկտեմբերի 20-21**	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում: Ծնողական ժողովներ	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփումը կատարվում է գրավոր աշխատանքների, գրավոր և բանավոր ստուգման տարբեր տեսակների կիրառմամբ: Ծնողական ժողովներում ներկայացվում են սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները:

	Հոկտեմբերի 16-20-ը	Ընթերցանության գնահատում 3-րդ,4-րդ դասարաններում	Տարրական դպրոցում ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված՝ թույլ կողմերը բացահայտելու և հետագայում շտկելու նպատակ հետապնդող աշխատանք:
	Հոկտեմբերի 16-20-ը	Մնացորդային գիտելիքների ստուգում հայոց լեզվից և գրականությունից 9-րդ դասարաններում:	Ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված՝ թույլ կողմերը բացահայտելու և հետագայում շտկելու նպատակ հետապնդող աշխատանք
	Հոկտեմբերի	Ծնողական խորհրդի նիստ	
	Հոկտեմբերի	Աշակերտական խորհրդի նիստ	
5/30	**Հոկտեմբերի 31**	Մանկավարժական խորհրդի նիստ	Մանկավարժական խորհրդի նիստն անդրադառնում է տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցության կողմից քննարկված հարցերին՝ ● ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրությանը, ● 2-րդ,5-րդ,7-րդ դասարաններում նոր չափորոշիչային պահանջների ներդրմանը,բացահայտված խնդիրների հիման վրա երկարօրյա խմբակների բացմանը, ● առարկայական օլիմպիադաներին

			նախապատրաստությանը, ● էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումներին: Մանկխորհուրդն անդրադառնում է տարբեր հարցերի, մասնավորապես՝ - սոցիալապես անապահով և ծնողազուրկ երեխաների հաճախումների և առաջադիմության, - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՈՒՊ-ների, - առանց ներդրման պետության կողմից տրվող վարձավճարների հատկացման և այլն:
	Հոկտեմբերի 27(ամսվա վերջին ուրբաթ օր)	Բաց դռների օր	Ուսուցիչները և ծնողները հանդիպում են ընթացիկ խնդիրների և ուսման որակի բարելավման նպատակով:

Նոյեմբեր-դեկտեմբեր

	Ամիսը, Ամսաթիվը	**Քայլը**	**Այլ տեղեկություններ**
1/31	**Նոյեմբերի 2**	Տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի (առկայության դեպքում) և մեթոդմիավորումների նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն	Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի, մ/մ նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը («Փոքր մանկավարժական խորհուրդ») քննարկում է մանկավարժական խորհրդի առաջիկա նիստի օրակարգում ընդգրկված հարցեր, մասնավորապես՝

			ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների հարցը:
2/32	**Նոյեմբերի 9-10**	Մանկավարժական խորհրդի նիստ	Մանկավարժական խորհուրդը քննարկում է ուսումնական տարվա առաջին ամիսներին (սեպտեմբեր-հոկտեմբեր) ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների, թեմատիկ պլանների և էլեկտրոնային մատյանների վարման հարցեր: Տես՝ **«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի՝ օրինակելի կանոնադրություն, կետ 79-80:**
3/33	**Նոյեմբերի 7 – 10-ը**	Տնօրենի հրամանը առարկայական օլիմպիադաների հանձնաժողովների կազմի հաստատման մասին	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի նախապատրաստության և կազմակերպման համար հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում են առարկայական օլիմպիադաների հանձնաժողովներ:
	Նոյեմբերի 1 – 10-ը	Ուսումնական հաստատության ջեռուցման կազմակերպում՝ սանիտարական նորմերին (Գլուխ IV. Շահագործվող հաստատությունների օդի ջերմային ռեժիմին ներկայացվող պահանջներ) համապատասխան	Ուսումնական հաստատության տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալը կամ տնտեսվարը պարբերաբար հետևում է դպրոցի շենքի՝ դասասենյակների,

			մարզադահլիճի և այլ շենքերի ջերմային ռեժիմի պահպանմանը
4/34	**Նոյեմբերի 1 – 6-ը**	Մեթոդմիավորումների կողմից հարցաշարերի կազմում և հաստատում տնօրենի կողմից	Մեթոդմիավորումների կողմից հասարակագիտական առարկաների և ՆԶՊ-ի առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի հարցաշարերը և ստուգող հանձնաժողովների անվանացանկը կազմվում ու ներկայացվում են տնօրենի հաստատմանը: ԲՏՀՄ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն անցկացվում է առցանց տարբերակով՝ կենտրոնացված կարգով մշակված հարցաշարերով:
5/35	**Նոյեմբերի 20 – 24-ը**	«Հայոց լեզու և գրականություն» բնագավառի մեջ մտնող ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն	Առարկայական մեթոդմիավորումների առաջարկությունների հիման վրա մանկավարժական խորհուրդը քննարկում և հաստատում է դասավանդման որակի ուսումնասիրության ծրագիրը, գործիքները (թեստ, թելադրություն, մրցույթ, համադպրոցական գրավոր աշխատանքի այլ տեսակներ), իրականացնող աշխատակազմը (տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, դասավանդող ուսուցիչներ, մեթոդմիավորման

			նախագահներ, դասղեկներ)։ Ուսումնասիրության արդյունքները, հատկապես 9-րդ դասարանների արդյունքների վերլուծությունը, ներկայացվում և քննարկվում է տնօրենի մասնակցությամբ կազմակերպվող խորհրդակցությունում («Փոքր մանկավարժական խորհուրդ»)։ Դրանք նաև քննարկվում են կիսամյակի վերջում՝ մանկավարժական խորհրդի նիստում։
	Նոյեմբերի 24(ամսվա վերջին ուրբաթ օր)	Բաց դռների օր	Ուսուցիչները և ծնողները հանդիպում են ընթացիկ խնդիրների և ուսման որակի բարելավման նպատակով։
6/36	**Նոյեմբերի վերջ-դեկտեմբերի սկիզբ**	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացում, արդյունքների ամփոփում։	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն անցկացվում է՝ - ԲՏՃՄ բնագավառի առարկաներինը՝ կենտրոնացված կարգով մշակված առարկայացանկով, - հասարակագիտական առարկաներինը և ՆԶՊ առարկայինը՝ ուսումնական հաստատության մեթոդմիավորումների կողմից մշակված հարցաշարերով։ Օլիմպիադաների դպրոցական փուլի արդյունքներն ամփոփվում և քաղաքային (շրջանային) փուլին մասնակցող սովորողների ցուցակները մ/մ-ների երաշխավորությամբ հաստատվում են

			Հաստատության տնօրենի հրամանով:
7/ 37	**Դեկտեմբերի սկիզբ**	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում: Ծնողական ժողովներ	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփումը կատարվում է թեմատիկ գրավոր աշխատանքների, գրավոր և բանավոր ստուգման այլ տեսակների կիրառմամբ: Ծնողական ժողովներում ներկայացվում են սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները:
9/3 9	**Դեկտեմբերի 15-20-ը**	Պետական ավարտական քննություններ հանձնողների դիմում-հայտերի փոխանցումը «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ (ԳԹԿ)	Հաստատության տնօրենը քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ:
10/ 40	**Դեկտեմբերի 13-17-ը**	«Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն	Ուսումնասիրությունը անցկացվում և արդյունքներն ամփոփվում են նույն կարգով, ինչպես և «Հայոց լեզու և գրականություն» բնագավառի մեջ մտնող ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրությունը:
11/ 41	**Դեկտեմբերի 25-30-ը**	Մանկավարժական խորհրդի նիստ. ● առաջին կիսամյակում սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների ամփոփում, ● առաջիկա տարվա բյուջեի նախագծի քննարկում ● տնօրենի զեկույցը Հաստատության խորհրդի	Մանկավարժական խորհուրդը քննարկում է ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների,

		որոշումների կատարման վերաբերյալ ● Տնօրենի տեղակալի (տեղակալների), դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի և մ/մ նախագահների հաշվետվությունները ● Էլեկտրոնային մատյանների վարման հարցերի քննարկում:	Հաստատության խորհրդի որոշումների կատարման, առաջիկա տարվա բյուջեի նախագծի և էլեկտրոնային մատյանների վարման հարցեր:
12/42	**Դեկտեմբերի 25-26ը**	Բյուջեի նախագծի ներկայացում Հաստատության խորհրդի հավանությանը Ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ հաշվետվության ներկայացումը խորհրդի քննարկմանը Երկրորդ կիսամյակի դասացուցակի հաստատում	Տնօրենը առաջիկա տարվա բյուջեի նախագիծը, Ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է կառավարման խորհրդի քննարկմանը: Տնօրենի հրամանով հաստատվում է երկրորդ կիսամյակի դասացուցակը:

Երկրորդ կիսամյակ
Հունվար - ապրիլ

	Ամիսը, Ամսաթիվը	**Գործողություն**	**Այլ տեղեկություններ**
1	**Հունվարի 3-8-ը**	Երկրորդ կիսամյակում ուսումնական գործընթացի նախապատրաստում	Տնօրինության կողմից՝ ● կազմվում է երկրորդ կիսամյակի ուսումնական պլանը, դասացուցակը, ● կատարվում է դասաբաշխում:
2	**Հունվարի 10-15-ը**	*Մանկավարժական խորհրդի նիստ.*	
3	**Հունվարի 15-18-ը**	Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի նիստ. ա. Ուսումնական տարվա առաջին կիսամյակի ֆինանսական և ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների քննարկում բ. Ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշվի քննարկում գ. Հաստատության զարգացման ծրագրի կատարման ընթացքի քննարկում	● Հաստատության տնօրենի ներկայացմամբ դպրոցի խորհուրդը քննարկում և հավանություն է տալիս ուսումնական տարվա առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությանը, ● Ի գիտություն է ընդունում ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը: ● Հաստատության տնօրենի ներկայացմամբ դպրոցի խորհուրդը քննարկում, հավանություն է տալիս և պետական լիազորված մարմնի հաստատմանը ներկայացնում հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը: ● Քննարկում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման ընթացքը և կայացնում համապատասխան որոշում:
4	**Հունվարի**	«Բանակի օր» տոնին նվիրված	Կազմակերպվում է հետևյալ

	24-28-ը	միջոցառումներ	միջոցառումները. ● այցելություն «Եռաբլուր» պանթեոն, ● հանդիպում Արցախյան պատերազմների վետերանների հետ, ● ցերեկույթի կազմակերպում և այլն:
5	**Հունվարի 10-31-ը** (ամենշաբաթ յա ռեժիմով)	Ներդպրոցական վերահսկողության իրականացում	● Մատենավարության ստուգում ● Դասղեկի ժամերի և ուսումնական խմբակների պարապմունքների կազմակերպման ստուգում
6	**Հունվարի 24-31-ը**	ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՈՒՊ-ների լրացում և քննարկում	ԱՈՒՊ-ների լրացումը իրականացվում է ուսումնական հաստատության ուսուցիչների և աջակցություններ տրամադրող այլ մանկավարժական աշխատողների կողմից, իսկ քննարկումը՝ հունվարի վերջին՝ ՈՒԱԳՏ-ի կողմից:
	Հունվարի 26(ամսվա վերջին ուրբաթ օր)	Բաց դռների օր	Ուսուցիչները և ծնողները հանդիպում են ընթացիկ խնդիրների և ուսման որակի բարելավման նպատակով:

	Ամիսը, Ամսաթիվը	**Գործողություն**	**Այլ տեղեկություններ**
7	**Փետրվարի 1-6-ը**	*Մանկավարժական խորհրդի նիստ.* Դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքների ամփոփում և մարզային փուլի նախապատրաստում	Տնօրինության կողմից՝ ● Փոխտնօրենը ներկայացնում է օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքները
8	**Փետրվարի 12-14-ը**	Հերթական ատեստավորում անցած ուսուցիչների դասավանդման արդյունավետության մշտադիտարկում: Նաև ԿԶՆԱԿ հիմնադրամի աշխատակիցների կողմից	● Մշտադիտարկումն իրականացնում են տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդական միավորումների նախագահները

		դասալսումներ:	
9	**Փետրվարի 15-18-ը**	Ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն՝ - Հայոց լեզու, Գրականություն (Հայ գրականություն) - Մաթեմատիկա (Հանրահաշիվ, Երկրաչափություն)	• Ուսումնասիրությունն իրականացնում են տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդական միավորումների նախագահները, անհրաժեշտության դեպքում՝ հրավիրյալ առարկայական մասնագետներ
10	Փետրվարի23 (ամսվա վերջին ուրբաթ օր)	Բաց դռների օր	• Ուսուցիչները և ծնողները հանդիպում են ընթացիկ խնդիրների և ուսման որակի բարելավման նպատակով:
11	**Փետրվարի 12-28-ը** (ամենշաբաթ յա ռեժիմով)	Ներդպրոցական վերահսկողության իրականացում	• Մատենավարության ստուգում • Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների վերահսկողություն
12	**Փետրվարի 26-29-ը**	ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՈՒՊ-ների լրացում և քննարկում	• ԱՈՒՊ-ների լրացումը իրականացվում է ուսումնական հաստատության ուսուցիչների և աջակցություններ տրամադրող այլ մանկավարժական աշխատողների կողմից, իսկ քննարկումը՝ հունվարի վերջին՝ ՈՒԱԳՏ-ի կողմից:

		Ամիսը, Ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ
	13	Մարտի 1	Տնօրենի, փոխտնօրենի և մեթոդմիավորումների նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն	Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի, մ/մ նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը («Փոքր մանկավարժական խորհուրդ») քննարկում է ԲՏԾՄ

				բնագավառի ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրության և ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման, սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների բարձրացման հարցը:
	14	**Մարտի 11-12**	Տնօրենի, փոխտնօրենի և մեթոդմիավորումների նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն	Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի, մ/մ նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը («Փոքր մանկավարժական խորհուրդ») քննարկում է՝ փորձարկող դասարաններում Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի պահանջների իրագործման հարցերը:
	15	**Մարտի 12-14-ը**	Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունները ներկայացնելու և հրապարակելու ժամկետները կազմելը	Դպրոցի բյուջեի նախագծի մշակման, բյուջեի հաստատման և կատարման մասին հաշվետվությունների աշխատանքները կազմակերպելու նպատակով տնօրենը կազմում է դպրոցի բյուջետային օրացույց. մինչև ընթացիկ տարվա մարտի 15-ը կազմում է՝ Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունները ներկայացնելու և հրապարակելու

				ժամկետները Տես՝ **«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ, կետ 51:**
	16	**Մարտի 14-15-ը**	Մեթոդմիավորումների նիստեր	Հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական մեթոդմիավորումները քննարկում են ուսումնական նախագծերի թեմատիկայի ընտրության և դրանց իրականացման հետ կապված հարցեր
	17	**Մարտի 18-19-ը**	Մանկավարժական խորհրդի նիստ	Մանկավարժական խորհուրդը քննարկում է հունվար-փետրվարին ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության, էլեկտրոնային մատյանների վարման, Ուսումնական նախագծերի իրականացման և այլ հարցեր: Տես՝ **«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 79-80:**
	18	**Մարտի 28-29**	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում: Ծնողական ժողովներ	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփումը կատարվում է գրավոր աշխատանքների, գրավոր և բանավոր ստուգման տարբեր տեսակների կիրառմամբ: Ծնողական ժողովներում

				ներկայացվում են սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները:
		Մարտի 26(ամսվա վերջին ուրբաթ օր)	Բաց դռների օր	Ուսուցիչները և ծնողները հանդիպում են ընթացիկ խնդիրների և ուսման որակի բարելավման նպատակով:

	Ամիսը, Ամսաթիվը	**Քայլը**	**Այլ տեղեկություններ**
19	Ապրիլի 1-30-ը	Հունիս ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակի փոխանցում ԳԹԿ	Պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակն ըստ առարկաների Հաստատության տնօրենը էլեկտրոնային եղանակով լրացնում և փոխանցում է ԳԹԿ:
20	**Ապրիլի 1-ից մայիսի 15-ը**	**4-րդ դասարանում** անցկացվող՝ **«Մայրենի»** (գրավոր) և **«Մաթեմատիկա»** (գրավոր) առարկաներից, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար **«Ռուսաց լեզու»** (բանավոր), ազգային փոքրամասնությունների դասարանների համար՝ իրենց **մայրենի լեզվից և գրականությունից** (բանավոր) գիտելիքների ստուգումների, **9-րդ դասարանի «Գրականություն», «Հայոց պատմություն»** և **«Օտար լեզու»** առարկաների ավարտական քննությունների տոմսերի կազմում:	**4-րդ դասարանում** անցկացվող գիտելիքների ստուգումների առաջադրանքները կազմվում են հաստատության մեթոդմիավորումների կողմից: **9-րդ դասարանի** «Գրականություն», «Հայոց պատմություն» և «Օտար լեզու» առարկաների ավարտական քննությունների հարցատոմսերը կազմում են Հաստատության մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված հարցաշարերի և տոմսերի նմուշների:
21	**Ապրիլի 4-5-ը**	Տնօրենի, փոխտնօրենի մասնակցությամբ խորհրդակցություն	Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը («Փոքր

			մանկավարժական խորհուրդ») քննարկում է տարվա ընթացքում սովորողների բացակայությունների նախնական հաշվառում անցկացնելու հարցը:
22	**Ապրիլի 11-12-ը**	Հերթական (պարտադիր) ատեստավորման ենթակա և կամավոր ատեստավորման հայտ ներկայացրած ուսուցիչների ցուցակների կազմում	Հերթական (պարտադիր) ատեստավորման ենթակա և կամավոր ատեստավորման հայտ ներկայացրած ուսուցիչների վերաբերյալ տվյալները ներկայացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին (կառույցներին): Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերաբերյալ հաստատության տնօրենը անհրաժեշտ գրանցում է կատարում ԿՏԱԿ-ի Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում, կամավոր ատեստավորմանը վերաբերող տվյալները ԿԳՄՍ նախարարության հայտարարության առկայության դեպքում նախարարություն են ներկայացնում հայտատու ուսուցիչները, հաստատության տնօրենը տրամադրում է համապատասխան տեղեկանք:
23	**Ապրիլի 11-12-ը**	Անդրադարձ ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն՝ - Հայոց լեզու, Գրականություն (Հայ գրականություն) - Մաթեմատիկա (Հանրահաշիվ, Երկրաչափություն)	Հաստատությանտնօրենի, փոխտնօրենի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը («Փոքր մանկավարժական խորհուրդ») քննարկում է ուսումնական առարկաների դասավանդման

			որակի՝ փետրվար ամսին իրականացված ուսումնասիրության արդյունքները, ձեռքբերումներն ու դժվարությունները: Տես՝ **«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն:**
24	**Ապրիլի 15-30-ը**	Հաստատության **մանկավարժական խորհրդի** նիստ՝ սովորողների կողմից ընտրված ավարտական («Օտար լեզու», «Բնագիտություն») **քննական առարկաների ցանկի հաստատում (9-րդ դասարան)**	Սովորողների կողմից ընտրված քննական առարկաների ցանկը հաստատվում է Հաստատության մանկավարժական խորհրդի որոշումով:
25	**Ապրիլի 22-23-ը**	ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների քննարկում	Հաստատության փոխտնօրենի և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքները: Հաստատության տնօրենի կամ ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի ներկայացմամբ հարցն այնուհետև քննարկում է հաստատության մանկավարժական խորհուրդը,
	Ապրիլի 26(ամսվա վերջին ուրբաթ օր)	Բաց դռների օր	Ուսուցիչները և ծնողները հանդիպում են ընթացիկ խնդիրների և ուսման որակի բարելավման նպատակով:

Մայիս-հուլիս

	Ամիսը, Ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ

1 / 26	**Մայիսի 1-3-ը**	Ավարտական, պետական ավարտական և կենտրոնացված պետական ավարտական քննություններին նախապատրաստության գործընթացի քննարկում	Հաստատության տնօրենի, փոխտնօրենի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը («Փոքր մանկավարժական խորհուրդ») քննարկում է ավարտական, պետական ավարտական և կենտրոնացված պետական ավարտական քննություններին նախապատրաստության ընթացքը, տալիս համապատասխան հանձնարարություններ: Անհրաժեշտության դեպքում քննարկվում է նաև ավագ դպրոցում փոխադրական քննություններին նախապատրաստության հարցը:
2 / 27	**Մայիսի 1-3-ը**	Անդրադարձ առարկայական օլիմպիադաներին սովորողների մասնակցության արդյունքներին	Հաստատության տնօրենի, փոխտնօրենի և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը («Փոքր մանկավարժական խորհուրդ») անդրադառնում է առարկայական օլիմպիադաներին սովորողների մասնակցությանը, նշում հաջողություններն ու դժվարությունները, խրախուսում օլլիմպիադայում աչքի ընկած սովորողներին և նրանց ուսուցիչներին:
3 / 28	**Մինչև մայիսի 15-ը**	**4-րդ դասարանում** անցկացվող՝ **«Մայրենի»** (գրավոր) և **«Մաթեմատիկա»** (գրավոր) առարկաներից, **9-րդ դասարանի «Գրականություն», «Հայոց պատմություն»** և **«Օտար լեզու»** առարկաների ավարտական	**4-րդ դասարանում** անցկացվող գիտելիքների ստուգումների առաջադրանքները կազմվում են հաստատության մեթոդմիավորումների կողմից: **9-րդ դասարանի** «Գրականություն», «Հայոց պատմություն» և «Օտար լեզու» առարկաների ավարտական

		քննությունների տոմսերի կազմում	քննությունների հարցատոմսերը կազմում են Հաստատության մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված հարցաշարերի և տոմսերի նմուշների:
4 / 29	**Մայիսի 13-17-ը**	Ուսումնական տարվա ընթացքում **120-200 ժամ դասերից բացակայած** Սովորողների վերաքննության կազմակերպում:	Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած 3-րդ,4-րդ,6-րդ,8-9-րդ դասարանների սովորողների վերաքննության հարցի քննարկում:
5 / 30	**Մայիսի 16-17-ը**	**4-րդ դասարանում** անցկացվող գիտելիքների ստուգումների առաջադրանքների, **9-րդ դասարանի «Գրականություն», «Հայոց պատմություն»** և **«Օտար լեզու»** առարկաների ավարտական քննությունների հարցատոմսերի ներկայացում Հաստատության տնօրենի հաստատմանը	Առաջադրանքները և հարցատոմսերը Հաստատության տնօրենի հաստատմանն են ներկայացնում տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը և/կամ մեթոդմիավորման նախագահները:
6 / 31	**Մայիսի 16-17-ը**	● Անդրադարձ ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրությանը՝ - Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն, Հասարակագիտություն - Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն ● Անդրադարձ էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումներին	Հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը («Փոքր մանկավարժական խորհուրդ») քննարկում է ուսումնական առարկաների դասավանդման որակի՝ հոկտեմբեր ամսին իրականացված ուսումնասիրության արդյունքները, հաջողություններն ու դժվարությունները, տալիս համապատասխան հանձնարարականներ: Խորհրդակցությունը քննարկում

			է նաև էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումների հարցը, նշում թերությունները, կատարում հանձնարարություններ դրանք որոշակի ժամկետում շտկելու ուղղությամբ:
7 / 32	**Մայիսի 16-20-ը**	Ուսումնական տարվա ընթացքում **120-200 ժամ դասերից բացակայած** 3-րդ,4-րդ,6-րդ,8-9-րդ դասարանների սովորողների՝ Հաստատությունից դուրս մնալու հարցի քննարկում **մանկավարժական խորհրդում** և համապատասխան տեղեկատվության ներկայացում	Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած **2-9-րդ** դասարանների սովորողների Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում: Ուսումնական տարվա ընթացքում 3-րդ,4-րդ,6-րդ,8-9--րդ դասարաններում 120-200 ժամ բացակայության դեպքում բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով:
8 / 33	**Մայիսի 20-22-ը**	Անդրադարձ Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով երկրորդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարմանը	Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի, փոխտնօրենի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը («Փոքր մանկավարժական խորհուրդ») քննարկում է Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով երկրորդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարման ընթացքին, գնահատում արդյունքները և տալիս համապատասխան հանձնարարություններ ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման ուղղությամբ:

			Խորհրդակցության ընթացքում բարձրացված հարցերը քննարկման են դրվում հաստատության մանկավարժական խորհրդի առաջիկա նիստում:
9 / 34	**Մայիսի 20-30-ը**	Ուսումնական տարվա ընթացքում **120-200 ժամ դասերից բացակայած** 3-րդ,4-րդ,6-րդ,8-9-**-րդ** դասարանների սովորողների՝ լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների անցկացում	2-9-րդ դասարաններում 120-200 ժամ բացակայության դեպքում սովորողները, տվյալ տարվա մայիսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում լրացուցիչ քննություններ են հանձնում «Մայրենի» (ազգային փոքրամասնությունների դասարանների համար «Մայրենի լեզու և գրականություն», «Ասորերեն», «Ռուսաց լեզու»), «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ՝ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկաներից: «Ֆիզկուլտուրա» առարկայից անցկացվում է ստուգարք:
10 / 35	**Մայիսի 30-31-ը**	2-9-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու, քննություններին թույլատրելու, հարցի քննարկում մանկավարժական խորհրդի նիստում	2-9-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու, ավարտական, փոխադրական քննություններին թույլատրելու, համապատասխան որոշում է ընդունվում Հաստատության մանկավարժական խորհրդի նիստում: 3-րդ,4-րդ,6-րդ,8-9--րդ, ինչպես նաև 19 տարին չլրացած 9-րդ դասարանի սովորողը **200 ժամից ավելի բացակայելու դեպքում** կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, 9-րդ դասարանի 19 տարին լրացած սովորողը դուրս է մնում ուսումնական հաստատությունից:

11 / 36	**Մայիսի վերջ - հունիս**	Գիտելիքների ստուգմանն ավարտական քննությունների անցկացում	Ավարտական քննություններն անցկացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված՝ սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական և կենտրոնացված պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգի պահանջներին համապատասխան:
12 / 37	**Հունիս**	Ուսումնական հաստատություն սովորողների ընդունելության կազմակերպում	Սովորողների ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով: Պետական ուսումնական հաստատությունների համար պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է՝ 1) տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին. 1.1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչև տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների, խնամակալության տակ գտնվող, հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող

			ծնողների երեխաներին. 1.2) ՀՀ տարածքում ներքին գործուղման հետևանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաներին. 2) տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին: Ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:
13 / 38	**Հունիս**	**Նախնական դասաբաշխում**	Հանրակրթական ուսումնական հաստատության հաջորդ ուսումնական տարվա [օրինակելի ուսումնական պլանների](#) հիման վրա մեթոդմիավորումը նախնական դասաբաշխման հարցը կարող է քննարկել հունիսի երկրորդ կեսին մանկավարժական աշխատողների արձակուրդ գնալուց առաջ:
14 / 39	**Հուլիսի 2-8-ը / օգոստոսի 20-30-ը**	**Վերաքննությունների անցկացում**	Վերաքննություններն անցկացվում են Նախարարության կողմից սահմանված կարգով և ժամկետներում: Տես նաև՝ **[Ուսումնական տարվա արդյունքների ամփոփման և հաջորդ ուսումնական տարվա նախապատրաստության գործընթացի քայլեր. ուղեցույց (օգոստոս-սեպտեմբեր)](#)**:

Տնօրեն՝ Է.Պողոսյան

30.08.2023թ